Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023 թվականի մարտի 27-ից 29-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   1. Ծովինար Սողոմոնյան
   2. Ներսես Զեյնալյան
   3. Լիլիթ Մովսիսյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
   2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ (վարչության պետի պարտականությունները կատարող)
   3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետի տեղակալ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, մարտի 27-ից 29-ը
4. **Հրավիրող կողմը՝**

   Եվրոպական միություն
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ներքո գործող մաքսային հարցերով ենթակոմիտեի 3-րդ նիստին մասնակցությունը:

6. **Քննարկված թեմաները՝**

   Նիստի ընթացքում ներկայացվել են մաքսային ոլորտին առնչվող գործընթացները, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող

դրույթները, որոնց մասով Եվրոպական միությունը կարող է աջակցություն տրամադրել:

Կողմերը ներկայացրել են մաքսային օրենսդրություններում վերջին մեկ տարվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները: Անդրադարձ է կատարվել մաքսային ոլորտին առնչություն ունեցող ԵՄ հարթակներին Հայաստանի մասնակցության հեռանկարներին: Քննարկվել են նաև մաքսային համագործակցության ուղղությամբ ԵՄ տեխնիկական գործիքների օգտագործման հնարավորությունները:

Կողմերը կարևորել են տարիների ընթացքում Հայաստանին ԵՄ-ի ցուցաբերած աջակցությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նիստի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ՝ մասնավորապես մաքսային ոլորտում համագործակցության,մաքսային օրենսդրության զարգացման միասնական տարանցման համակարգի և մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների պաշտպանության վերաբերյալ ելույթներով են հանդես եկել Ծովինար Սողոմոնյանը,Ներսես Զեյնալյանը և Լիլիթ Մովսիսյանը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Կողմերը փոխանակել են տեղեկատվություն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ և փոխադարձ տեղեկություններ հայտնել դրանց զարգացումներից:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման արդյունքնում կողմերը մեկ անգամ ևս արձանագրել են ԵՄ և Հայաստանի Հանրապետության միջև հաստատված տնտեսական և առևտրային սերտ գործընկերային հարաբերությունները և վստահություն հայտնել, որ դրանք շարունակական բնույթ կկրեն:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

31. 03. 2023þ.